ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 03.06.2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 172-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ» ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի պահանջներով,

հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 03.06.2016թ. թիվ 172-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգում (**այսուհետ՝ Կարգ**) փոփոխություն կատարելու, մասնավորապես՝ 01.03.2018թ. դրությամբ գործող փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանների կողմից արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտ ստանալու դիմումը ներկայացնելու՝ Կարգի 23-րդ կետում նշված ժամկետը երկարաձգելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. *Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 03.06.2016թ. թիվ 172-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգի 23-րդ կետի երրորդ նախադասությունում* ***«մայիսի 30-ը» ամիսը և ամսաթիվը փոխարինել «հունիսի 30-ը» ամսով և ամսաթվով****:*

2. *Սահմանել, որ սույն որոշմամբ կատարված փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունիսի 1-ից:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

01 հունիսի 2018թ.
թիվ 234-Լ
ք. Երևան